





ԵՍ ՉԵՄ ԾԽՈՒՄ
ԵՎ ԴԱ ԻՆՁ ԴՈՒՐ Է ՉԱԼԻՍ



ԱՍԱ
«ՈՉ»
ԾԽԱԽՈՏԻՆ



ԱՍԱ
«ՈՉ»
ԾԽԱԽՈՏԻՆ



ԾԽԱԽՈՏԻ ԾՈՒՄԸ
ՍՊԱՌՆՈՒՄ Է
ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ

Ծխախոտի ծխի մեջ պարունակվում են **5000 քիմիական նյութեր**, որոնցից 69-ը օժտված են բացկեղածին հատկություններով:



- Ինչպես ակտիվ, այդպես էլ պասիվ ծխելը նպաստում է սիրտանոթային, բրոնխի շնչառական հիվանդությունների, բաղցկեղի և շաքարային դիաբետի առաջացմանը:
- Ծխախոտի մեջ պարունակվող նիկոտինը առաջացնում է վտանգավոր կախվածություն: Ծխախոտային կախվածությունը՝ հիվանդություն է:
- Ծխախոտի ծուխը վտանգ է ներկայացնում ոչ միայն ծխող, այլ նաև ծխախոտի ծխով լցված միջավայրում գտնվող այլ մարդկանց՝ պասիվ ծխողների համար:



- Յուրաքանչյուր տարի աշխարհում 6 մլն. մարդ մահանում է ծխախոտի օգտագործումից առաջացած հիվանդություններից:
- Այս մահերը հնարավոր է կանխարգելել՝ արգելելով ծխախոտի օգտագործումը:
- Ծխախոտի երկարատև օգտագործումն առաջացնում է շերտիկների լորձաթաղանթի բորբոքում և նպաստում է ասթմայի և այլ շնչառական հիվանդությունների զարգացմանը:
- Ծխելուց հետո բարձրանում է արյան ճնշումը, առաջանում է ծայրամասային անոթների նեղացում:
- Ծխախոտի ծխի մեջ պարունակվող տարբեր բաղադրանքային նյութեր նպաստում են բերանի խոռոչի, կրկրորդի, կերակրափողի, շնչափողի, բրոնխների, թոքերի, միզապարուկի և այլ օրգանների չարորակ նորագոյացությունների առաջացմանը:
- Հղիության և հետծննդյան շրջանում ծխախոտի ծխի ազդեցությունը մեծացնում է պտղի մահաբերության, նորածնի զանր բաշի, վաղաժամ ծննդաբերության, նորածնի հանկարծամահության, երեխայի մոտ բրոնխիտի, ասթմայի, թոքաբորբի զարգացման վտանգը:

- Դեռահասային տարիքում ծխախոտի օգտագործման սկիզբը նպաստում է ուժեղ կախվածության զարգացմանը:
- Ծխախոտի օգտագործումը կարող է հանգեցնել այլ կրոնի, մարիխուանայի (կանեֆի) և այլ թմրանյութերի օգտագործմանը:
- Կանաչե ավելի զգայուն են ծխախոտի վնասակար ազդեցության նկատմամբ: Ծխող կանանց մոտ շուտ փոխվում է դեմքի մաշկի գույնը, առաջանում են կնճիթներ, կոշտանում է ձայնը:
- Յուրաքանչյուր ծխած սիգարետը կրճատում է կյանքը 12 րոպեով:
- Էլեկտրոնային սիգարետները ծուխ չեն արտադրում, սակայն նիկոտին են պարունակում, առաջացնում են կախվածություն և նույնպես վնասակար են:

ՓՈՂՋԱՐԿՈՒՄԵՐ
ՄԿ ԿԱՏԱՐԻՐ ԾԽԱԽՈՏԻ ՀԵՏ:
ԾԽԱԽՈՏԸ ԿԱՆԿԱԾՈՒԹՅՈՒՆ Է
ԱՌԱՋԱՑՆՈՒՄ:

